

Centrelink ի հետ ձեր կողմէ գործող անձ մը



Someone to deal with Centrelink for you—**Armenian**

Կրնաք ուրիշ անձի մը կամ կազմակերպության մը իրաւունք տալ Centrelink ի հետ ձեր կողմէ գործելու:

Անձը կրնայ ըլլալ ոեւէ մէկը, ներառեալ՝

- ազգական մը կամ բարեկամ մը,
- Հանրային Խնամակալ, Խնամակալութեան Տնօրէնութիւն, կամ
- ձեզի հոգացող կազմակերպութեան մը ներկայացուցիչը:

Centrelink ը յաճախորդներուն օգնելու համար կ'առաջարկէ երեք տեսակ կարգադրութիւններ:

Person Permitted to Enquire (PPE) – հարցուփորձ ընելու արտօնուած անձ – այս կարգադրութեամբ անձի մը կամ կազմակերպութեան մը ձեր կողմէ իրաւունք կը տրուի միայն հարցումներ ընելու:

Payment nominee – վճարումը ստանալու համար նշանակուած անձ – այս կարգադրութեամբ անձի մը կամ կազմակերպութեան մը իրաւունք կը տրուի ձեզի համար ձեր վճարումները ստանալու: Վճարումը ստանալու համար նշանակուած անձը պետք է՝

- Արձանագրութիւն պահէ մանրամասնելով թէ ձեր վճարումները ինչպէս ծախսուած կամ այլ ձեռով գործածուած են,
- պատասխանել Centrelink ի կողմէ ձեր վճարումները ինչպէս օգտագործուած ըլլալու արձանագրութիւնները տրամադրելու խնդրանքին, եւ
- միշտ պետք է գործէ ի նպաստ ձեր լուրջ շահերուն:

Correspondence nominee – յարաբերող անձի նշանակում – այս կարգադրութեամբ անձի մը կամ կազմակերպութեան մը իրաւունք կը տրուի ձեր կողմէ գործելու եւ փոփոխութիւններ ընելու: Correspondence nominee մը կրնայ ձեր կողմէ կատարել Centrelink ի պահանջներուն մեծ մասը եւ իրաւասութիւն ունի ստանալու ձեր նամակներու օրինակները, փոփոխութիւններ ընելու ձեր տեղեկութիւններուն եւ հարցուփորձեր ընելու ձեր կողմէ: Անոնք կրնան ձեր Centrelink ի ժամադրութիւններուն ներկայ գտնուիլ ձեզի հետ կամ ձեր փոխարէն:

Correspondence nominee ն միշտ պետք է գործէ ի նպաստ ձեր լուրջ շահերուն, եւ կրնան

- Centrelink ին տեղեկացնել ձեր պարագաներու փոփոխութեան մասին,
- ամբողջացնել Centrelink ի դիմումագրերը եւ յայտարարագիրները ձեր կողմէ, եւ
- Centrelink ին տրամադրել ձեր պարագաներուն վերաբերող վաւերագրեր:

Անկարողութեան փաստ պիտի պահանջուի այն պարագաներուն երբ յաճախորդը չի կրնար ամբողջացնել կամ ստորագրել դիմումագիրը ֆիզիքական, հոգեբանական կամ մտային անկարողութեան մը պատճառով: Նշանակելի կարգադրութիւնները ընդհանրապէս կամաւոր են եւ կրնան ջնջուիլ որեւէ ժամանակ կապ հաստատելով Centrelink ի հետ (բացի եթէ կարգադրութիւնը օրէնքով հաստատուած է, օրինակի համար դատարանի կողմէ նշանակուած կարգադրութիւն մը որ կրնայ ջնջուիլ միայն պատկան Իշխանութեան համաձայնութեամբ):

Մէջ մը որ ձեր կողմէ գործելու իրաւունք տաք մէկու մը, ձեր նշանակած անձը կրնայ արձանագրուիլ համացանցի սպասարկութիւններուն: Անոնք կրնան տեսնել եւ այժմեականացնել ձեր անձնական տուեալները օգտագործելով Centrelink's Համացանցի Սպասարկութիւնը:

Ձեր նշանակած յարաբերող անձը երբ որ արձանագրուած ըլլայ համացանցի սպասարկութիւններուն կրնայ նաեւ բաժանորդագրուիլ համացանցի միջոցով ստանալու համար ձեր նամակները Centrelink – Էն եւ Family Assistance Office – Էն:

Ձեր նշանակած անձը Centrelink's Online Service արձանագրուելու համար պետք է երթայ հետեւեալ կայքէջը՝ www.centrelink.gov.au եւ ընտրէ՝ 'Register for Online Services':

Պուք եւս կրնաք իրաւունք ունենալ արձանագրուելու eServices տեսնելու եւ այժմեականացնելու ձեր տուեալները:

Գարեւոր. Թէ դուք եւ թէ ձեր նշանակեալը պետք է յիշէք որ ձեր կողմէ առնուած կամ չառնուած որեւէ քայլեր որոնց պատճառով չափէն աւելի վճարում կատարուած է, դուք պատասխանատու պիտի ըլլաք որեւէ գումարներու որոնք ետ պետք է վճարուին:



Եթե կ'ուզեք նշանակել մեկը որ ձեզի համար Centrelink – ի հետ յարաբերի, դուք եւ ձեր նշանակած անձը պետք է ամբողջացնեն հարցարան մը *Իրաւունք տալով անձի մը կամ կազմակերպութեան մը ձեր կողմէ հարցումներ ընելու կամ գործելու*: Centrelink - ի հետ բացի Անգլերէնէ այլ լեզուներով խօսելու համար հեռաձայնեցէ՛ք **13 1202***: Ձեր լեզուով եւս տեղեկութիւն կարելի է գտնել հետեւեալ կայքէջէն **www.centrelink.gov.au**

*Ձեր տան հեռախօսէն Centrelink – ի “13” թիւերուն հեռաձայնելու գիները կը տարբերին ըստ ձեր հեռախօսի սպասարկութեան ընկերութեան: Ձեր տան հեռախօսէն “1800” թիւերուն հեռաձայնելը ձրի է: Հանրային հեռախօսներէ եւ բջիջային/շարժուն հեռախօսներէ եղած խօսակցութիւնները աւելի սուղ են: